

Հուս կը վերջանան կին ստեղծողի փոփոխութիւնները։ Այս անգամային ստեղծող կը համարինք որ ընթաց-
ձակ է պայծառ կերպով ամբողջացողինք մեր ծրա-
դրին թացատրութիւնը՝ որ նրաարարողիցս առանց ո՛ր և
է յառակութեան, այլ միայն նորութեան (variété)
տիպաբան « Բենեֆիտիս ղոտալիս հոմոյին միջ »։

Մեր նպատակն հղաւ տեղամ մ'ալ ցուցնել մեր հա-
մաձոյութիւնը 'Նիկիոյ վեռոյն կեա՝ դրութեամբ հոծ-
նեակի և կիրակիներու՝ իբրեւ պատուիրեալ տօնի և հան-
գրատեան օրերու, և միանգամայն սպառնացանելու թաղ-
ամթիւ օգուտները հաստատուն և անփոփոխ ստեղծողի
մը՝ Չատկի անշարժ թուականով համաձայն արեւային
կամ քաղաքական տարւոյն։

Կը համարենք յառաջ թէ ուսումնասէրները մեր
այս ծրագրին աւելի պարզ և աւելի բանաւոր պիտի
զտնեն քան այն դրութիւնները՝ զորս ի կիր արկեր են կին
մոդովորները, որոնք ամէն գարու մէջ փորձեցին նոր
փոփոխութիւններով հաստատել իրենց սուրբ կամ
քաղաքական տարւոյն անշարժ շրջան մը (ciclo)։ Մի
և նոյն միջոց յայտնապէս դուրս պիտի ցայտէ այն
տարբերութիւնը՝ որ կայ ընդ մէջ մեր ծրագրին և շար-
ժական Չատկի դրութեան, զոր կիժէ ընդունինք նոյն
խոյն սահմանափակեալ շրջանի մը մէջ՝ սակայն միշտ
ժանր անտեղութիւն անպակաս պիտի ըլլայ, և կրող
նուազանելու զգալի կերպով ընդհանրական հեղինակ
միջանկովինը, թէ՛ ստեղծաւել ըստ հեղինական կար-
գաւորութեանց, իւր տօներուն և հասարակաց զայտա-
մանց, թէ՛ ըստ քաղաքական և դպրոցական կարգին
թէ՛ ըստ միջազգային կրօնա - քաղաքական և վաճա-
րականական գործերուն միջև բոլոր ազգաց և բոլոր
երկրորդական, աշխարհադաստիարէն մեր միտեն տար-
բեր գիրքերով զետեղուած երկրագնդին երեսը։

Մինչդեռ յանձն առնելով արմատական վերանորո-
գութիւն մը, անփոփոխ տումարի դրութեամբ, Չատկի
անշարժ թուականով, մի անգամ ընդ միշտ համաձայ-
նութեամբ ընդունելով և հաստատուելով թէ՛ հեղինակա-
կան և թէ՛ քաղաքական իշխանութիւններէն, այնուհետեւ
ան պիտի շարունակուի անփոփոխ կերպով տասնեակ
հարիւրաւոր դարերը՝ մինչև որ ստեղծողութեան թիւը
ի հաշուի ունենալով ՝ Վ, Օ՛ = Ը, որ երկրիս թա-
ւաթանէն ստալ կու գան, ամբողջական օր մը կաղմն-
լու համար։

Եւ մենք մը ցաղմենք մեր ընթերցողաց՝ որ այդ
օրուան ծագումը տեսնեն։

Մթնոտաղային քան լի պիտի թաղ ըսելու՝ կիժէ ոչ
« Արդ այս արեւմտեան օր էր Ի՛ն Է՛ լքեալ է, նոյն
դարձ է Գիլ և Բէ՛ Բե՛ Բե՛ Բե՛ »։

Հ. Գ. ՆԱԱՎԱՅՏԱՆ
Թրգմ. Իտալէ Հ. Ե. ՓԵՂԻՆՅԱՆ

ԳԵՌՈՐԳ ՎԱՅ ՏԱՎԱՆԻ ՄԸ

ԳԵՌՈՐԳ ՍԻՆԱՆԵԱՆ

(Շար. տես Բազմ. 1922 էջ 871)

6. Օտարագլխի երաժիշտներու գնահա-
տութիւնները։

Գեորգի ստոյգ Վիրրոսոզ մ'ըլլալուն իբր
ապացոյց՝ աւելորդ չենք համարիր հետեւեալ
վկայութիւնները տողելու։

Ինեոս Ֆրանսէի մէջ տրուած Նուա-
գացութեան վերջ Adinolfi անուն իտա-
լացի հեղինակ - երաժիշտ դաշնակահարը
հիածումով կը կրկնէր.

« Bravo! Bravo! questo ragazzo
è un talento! ».

(Կեցցէ՛, կեցցէ՛, այս պատանին տաղանդ
մ'է)։

Երգիոնահար Della Tola կը հաւա-
տէր. « Այս նուագմոռիւրիւր անակնկալ մ'էր.
այս պատանին հաճեալ մ'է »։

Միանթ Ղութակահար M. Romano
Գեորգին նուագածութեան տօնն Սինտինկի
վերոյիշեալ կտորին տրոհումները (por-
tions) ի ձեռին՝ ուշադրութեամբ հետեւէ
վերջ, սաստկածայն Bravo! Bravo!
Bravo! գոչելով կը ծափահարէր. ի վեր-
ջոյ Գեորգին և իր Ուսուցչապետ հար-
ազատներուն ցոյց տալով տրոհումները
ուրախակցութեամբ կ'արտայայտուէր՝ թէ
այն ամենադժուարին հեղինակութիւնը
նուագածելու համար՝ պէտք էր Ղութա-
կահար մը արտաքոյ կարգի կարողութեան
տէր ըլլալ։

Ուրիշ ուսուցիչ մը Ջութակի, Albert
Braun, նուագածութեան վերջ՝ Գեորգին
գովեստներ ընելով՝ կը մաղթէր որ իր
մասնահնչողին մէջ յարատեւելուն սատարեն
ծնողքն ու Մանդրոյ Յարութիւնը՝ մարդ-
կույթեան նշանաւոր Ղութակահար մը ըն-
ծայելու համար։

Կատարեալ մարդ մը երեք քան լաւ պէտք
է զուգակշռէ. մարմինը, զգացումը, մի-
տածութիւնը։

ՄԱՆԻԿԻԱՅՏԱՆ

7. Հայ մամուլին յօդուամօխկները.

Պոլսոյ լրագիրներէն ոմանք Գէորգ Սիւնանեանը կ'անուանէին Հայ նորաթիթ Բականինի, Պոլսահայ Քիւլլիբ մը, այլք նոր թիպոյ, Ֆլորիցէլ, Հ. Մարթոյ:

«ՀԱՅԱՏԱՄԱՐՏ» ի մէջ այլոց կը գրէր. «Մասնաւորապէս ուշագրաւ ու գնահատելի էր զոց նուագելու իր պարագան՝ որ վաղահաս յանձնապատանութեան մը յատկանիշն է և տրուած՝ միմիայն իրենց կատարելութեան վստահութեամբը զինուած արուեստագէտներուն: Քաղցր միա՝ մըտութեամբ մը սեւեռուն՝ կարծես երկինքներէն քաղելով իր ձայներն ու թրթռացումները՝ յայտագրի ետոր կտորներուն մէջ ալ հաւաստարապէս ցոյց տուաւ ընտանի շնորհ մը և յիշատակքով ձեռք բերուած տիրականութիւն մը:

«ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ» ... «Բացառիկ ձերքերով օժտուած ան ի յայտ բերաւ կատարեալ թէքիթ մը և զգալու ու զգացնելու արտակարգ կարողութիւն մը, և վստահօրէն կրնանք ըսել որ դէպ ի վիրիօզիթի իրեն համար գրեթէ շատ չնչին բան մը ֆիսցած է այլևս»:

Իր յայտագրին մէջ կը տեսնուէին Սէն-Սանս, Սիտինի, տ'Ամբրոզիօ, Նոփալէք, Թարթինի, և այլն, բոլորն ալ զանազան ցեղերու, զանազան ազգերու, զանազան խառնուածքներու, ու զանազան ոճերու ու ղարոցներու պատկանող վարպետներ: Մերթ տխուր, մերթ զուարթ կամ լուրջ ու թեթեւ, տառապանք ու վիշտ, ուրախութիւն ու ցնծութիւն դեռատի ջութակահար մասններուն տակ իսկապէս կը զգացնէին, և ինչ որ իր արժանիքը ալ աւելի կը բարձրացնէր՝ արտայայտութեան կատարեալ գիտակցութիւնն էր» ...:

«ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՅՆԸ» ... «Ամէն մէկ կտոր աւարտելուն, իտալացի համբաւաւոր երաժշտագէտ ուսուցիչներ, չկրնալով զսպել իրենց հիացումը, Պրավօ՝ պրավօ՝ կը զոչէին խանդավառ. ու ծափահարութիւններու աղմուկին մէջ, Գէորգ Սիւնանեան կրկին բեմ կը կոչուէր, մինչ շատեր կը փութային շնորհաւորել տաղանդաւոր պատանիին ծնողքն ու հօրեղբայրը՝ Միսէսյոյց Յ. Սիւնանեանը: Անպէս որ Նոփալէքի *perpétuel* կրկին անգամ նուագելէ

զատ՝ յայտագրէն դուրս երեք շորս ուրիշ կտորներ ևս նուագել հարկ եղաւ՝ գոհացում տալու համար հանդիսականներուն»:

8. Օտար Մամուլն ալ զնամատեց՝ դեռատի Գէորգը:

Պոլսոյ Յոյն և Ֆրանսերէն լրագիրները զովեստ և հիացում արտայայտելէ զատ՝ Բարիգի *Musique et instruments* ամսաթերթը 1921ի դեկտեմբեր 10ի թիւին մէջ հրատարակած է.

«L'événement musical du mois dernier a été le début du très jeune violoniste arménien Georges Sinanian, à peine âgé de 15 ans.

Appartenant à une famille de musiciens, son père était professeur de violon, son oncle, M. Haroutioun Sinanian, professeur de musique, il vécut dès le plus jeune âge dans une atmosphère artistique et dans ce milieu musical, il sut former son goût. Dans un laps de temps relativement court, grâce à une bonne école, il acquit des qualités d'exécution et d'interprétation au-dessus de tout éloge. Dans son premier concert figuraient des œuvres de Saint-Saëns, Sinding, Tartini, Novacek, d'Ambrosio, etc., et partout le jeune artiste montra un jeu et une technique vraiment remarquables».

9. Անգամ քննադատ մը.

Երաժշտասէր (amateur) հայ մը միա՝ կը եղաւ որ Գէորգին նուագահանդէսի աւտին կ'ըսէր. «Մըքնեալաբար զարեւումք մը, անկէ անդին բացառիկ բան մը չեմ տեսներ»:

Գիտենք թէ ամէն ակնոց ամէն աչքի չի յարմարիր. կը տեսնուի որ ամէն աւանջ ալ՝ ամէն գեղեցիկ նուագածութենէ համ չ'առնուր: Այսպիսեաց թէեւ կը պատշաճի ըսել «De gustibus non est disputandum», սակայն փափաքելի էր նմանօրինակ անձերու քննադատմանը՝ պատճառաբանութիւններով հրատարակուած տեսնել, վասն զի թէ՛ նուագա-

ծունեքը և թէ ուսուցչապետները առիթ պիտի ունենան օգտուելու.... կամ ըսելու

« La critique est facile,
Mais l'Art est difficile ».

10. Գէորգի մասին Ուսուցչապետին խորհրդածութիւնները.

Ստուգիւ ամենազովուարին եղող յայտա-
գրի մը այսքան կատարեալ գործադրող
Զուլթակահար Գէորգի ընդունակութեան
մասին՝ չքաշուեցանք սա հարցումն ուղ-
ղել առ հօրեղբայրն՝ Մասեղայր Յ. Սինա-
նեան.

— « Ինչ աստիճանի կը դատէք Գէորգի
Զուլթակահարութեան կարողութիւնը ». Պա-
տասխանեց.

— « Կարծեմ Գէորգը ասպարէզ ելլելէ
վերջ և թերթերու մէջ հրապարակաւ գո-
վուելէ յետոյ այլ ևս ինձ ո՛ր և է խօսք չի
մնար ըսելու, մանաւանդ որ Գէորգը թէ՛
աշակերտս և թէ՛ եղբօրս որդին ըլլալով՝
ինչ որ ալ արտայայտեմ անձնազովու-
թեան պէս բան մը ըրած պիտի ըլլամ »:

Մեքի՛ր ախորժեկի ըլլալով երաժշտագէտ
Ե. Սինանեանի գիտական մերտով խօ-
սակցութեան ոճը, հարկադրեցանք՝ իբրեւ
օտար անձնաւորութիւն արտայայտուիլ և
Զուլթակահարութեան գեղարուեստի ոգին
բացատրել. Ահա՛ ի՛ր գաղափարները.

— « Գէորգի՛ մանկութենէն սկսեալ՝
ջանացիք ընտիր Զուլթակահար մ'ըլլալու
յատկութիւնները ըմբռնել տալ, ու մի և
նոյն միջոց խորշեցնել այն թերութիւն-
ներէն՝ որոնք զրեթէ ամէն Զուլթակի սիրա-
հարներու պակասութիւնն է, այսինքն
զգուշացնել ազատակամ և քմահաճ նուա-
զահարութենէ:

Պէտք է զգուշանալ,

Ա. — Ո՛ր և է կտոր սորվելու ատեն
անընդհատ թրթռացումներ ընելէ, վասն
զի երեւի ուսուցչապետներ կ'ըսեն.

« Il faut savoir aussi de ne pas vibrer ».

Նոյնպէս Demeny, Physiologie des profes-
sionsին մէջ հետեալը կ'ըսէ. L'abus du tre-

molo de la main gauche est un défaut fort
répandu.

Rien n'est agaçant comme cette vibration
rappelant le chevrottement du chanteur; l'é-
motion artistique n'a rien à voir avec cet
effet purement mécanique; si parfois on l'em-
ploie avec succès, il est de bon goût d'en
user avec la plus grande modération.

Բ. — Պէտք է ետ կենալ անտեղի
glissandoներու չափազանցութենէն,

Գ. — Պէտք է նուազածութեան ատեն
զուսպ կենալ տառել կամ նուազ այլան-
դակ շարժումներ ընելէ. ինչ որ յաճախ
Զուլթակի նուազածութեան՝ ալէկոծութենէ
բռնուածի շարժումներ կ'ընեն, կարծես
ոռնկողիները փոխանակ լսելիքով հմա-
յիւլու՝ կ'ուզեն տեսանելիքով հետաքրքրել.
Լսեցէք ինչ կը գրէ՝ « L'art du chef
d'orchestre » գրքին մէջ Deldevez, նը-
կատմամբ այլանդակ ձևերով երաժշտա-
խումբ մը կառավարողին.

« Les maîtres d'ormes, de boxe, les jon-
gleurs, les amateurs d'escrime se passionnent
volontiers pour le batteur de mesure qui
paraît posséder les secrets d'une botte
portée ou parée, et semble toujours prêt à
asséner un vigoureux coup de poing ou à
« casser son violon » sur la moindre erreur
de leur part:

Les dilettants éclairés aiment, au contrai-
re, à reconnaître dans les mouvements du
chef d'orchestre l'expression vraie des senti-
ments qu'ils éprouvent par l'exécution. Ces
vrais connaisseurs considèrent, avec juste
raison, le rôle muet du chef d'orchestre à
temps, à la partie musicale, ce que les gestes,
la tenue, le silence même, enfin tous les
moyens naturels qui viennent en aide à la
transmission des sentiments exprimés.

Իսկ նշանաւոր երաժիշտ P. Baillot
ալ գրած է. « Dans l'exécution, occupant le
centre du mouvement, le chef d'orchestre le
dirige d'une main si habile que son mérite
reste inaperçu de la multitude, frappée des
beautés de l'ensemble, elle ne saurait voir
d'où part l'étincelle électrique dont la com-
mission se fait si fortement ressentir à tous ».

Վարպետ հեղինակներու այս դիտարկումները կը պատշաճին նաև կտրին ջուլաթահաշարներու . ահա՛ այդ պատճառաւ երկուք ու կէս ժամ տեղդ Գէորգին ջուլաթահաշարեան ատեն՝ նա ո՛չ մէկ զգայ-նոտի շարժումներ չըրաւ, այլ զգացում ներշնչեց ունկնդիրներուն:

Դ. Վերջապէս զգուշանալու է ըստ

կամս, անտեղի և անտրամաբան արտայայտութիւններ և ուսուցիչներ ընելէ, որոնք երաժշտութիւնէ հասկցող ականջներու համար՝ սխալ նօթաներ լսեցնելու հաւասար քնտանիք են:

Այսպիսի խնդիրներ նկատի առնել կաւրճապետ համար, ստուգել երաժշտական բազմակողմանի դաստիարակութիւն պէտք է ունենալ. սակայն եթէ վերոյիշեալ պարագաները մեր Գէորգին համար նշանակութիւն չունենան՝ ո՞վ գիտէ ի՞նչ տարօրինակ գաղափարներու վրայ հիմնուելով իրեն բարձր ընդունակութիւնը խանգարուած և խամբուած վարդի մը կը վերաժուի գուրդի ո՛ր է հմայքէ, փարեախտաբար մենք կրցած ենք իր նկարագրի մեր ուզածին համեմատ կազմապահել:

Սա ալ ըսեմ թէ մենք մինչև ցարդ մեր Գէորգը ջուլաթակով միայն հետաքրքրելով, զինքը առաջին անգամ բեմ բարձրացուցինք լուրջ և դժուարին յայտագրով մը: Սակայն ասկէ յետոյ մեր ջանքը պիտի ըլլայ լրջօրէն աստիճանաբար իրեն դաշնակի և դաշնագրութեան (harmonie) և ուրիշ ճիւղերու մէջ, որմէ վերջ պիտի յղենք զինքը Եւրոպայի ընտիր երաժշտանոց մը, որով կը յուսանք տաղանդաւոր և հեղինակաւոր երաժիշտ մը ունենալ մեր սեւուորդին մէջ:

— Անտարակոյս, Վարպետ, ըսինք իրեն, ձեզ նման արհեստագէտ հմուտ անձնաւորութիւն մը Գէորգը առաջնորդ ունենալէ վերջ, որ ի ծնէ տաղանդ մ'է, նա եւրոպական միջավայրի մէջ պիտի ձևակերտուի, և պիտի ըլլայ ջախջախուած հայութեան պանծալի հանճար մը:

11. Գէորգին Բ. Նուագամանդէսը 1922ի Ապրիլ 6ին:

Այս անգամ Բերայի Բրդի Շանի Թատրոնի բեմին վրայ ժամը զեշերուան 10՝/15ին պատրաստ տեսանք Գէորգը իր ջուլաթակով, Մահողոյ Յարութիւնը դաշնակի առջև, իր Անտոն եղբայրը ջուլաթակով և Յովսէփ եղբայրն ալ Թաւ ջուլաթակի դիմաց: Ու հրաժիշտ հայ ընտանիքի ընտիր շառաւիղները սկսան նուագել երաժշտական ընտիր *quator* մը որ Saint-Saënsի գր. 41 Յայգանուագն էր:

25 վայրկեանի տևողութեամբ, չորս մասերով այս դժուարին երկը՝ երաժիշտ չորս հարազատները արհեստի բոլոր ներութիւններուն համեմատ հնչեցնելուն առանձն ուղադրու էր և ամենայն ջոհակ Գէորգ պատանին, որ վերստին ի յայտ բերաւ իր զարմանալի յիշողութիւնը, բովանդակ գործը ինքնավստահ կեցուածքով հատուած նուագելով:

Միտնուագ երաժշտութեան մ'ատեն՝ զոց (*par cœur*) հնչեցնելը բացառիկ բան կը համարուի հմուտ երաժիշտներէ, սակայն Գէորգին այս մեծ կարողութիւնը ստուգելու չափանշուած բան է և ապացոյց անոր եզակեան և ինքնայատուկ տաղանդին բարձրութեանը, քանի որ այսպիսի նուագածութեանց ատեն հեղինակաւոր ուսուցչապետներն իսկ աչքերնին չորս կը բանան հանդիպակաց նօթագրութիւններու վրայ:

Quator և աւարտին միահամուտ ծափահարութեանց ատեն, ճաշակի տէր ընկերներս կը խորհրդածէին՝ որ «Միևնոյն հայ հարգասերու այս ընտիր յայտագրով և տարբեր գործիքներով կազմակերպութիւնը, և ընտրելագոյն գործադրութիւնը, հայ ազգայնոց իրաւունք մը կու տան հպարտանալու՝ թէ հայ հանճարը Գեղարուեստական ճաշակով բեղնաւոր է և անմահ» — «Ե» մեր Հայոց Պատմութեան մէջ մինչև այսօր չկայ այսպիսի երաժշտական բարձր ընդունակութիւն արտայայտող ընտանիք մը: Իսկ Եւրոպացոց մէջ Bachերը Straussներ եթէ գոյութիւն ունեցած են՝ անոնք միշտ նպաստաւոր միջավայրերու մէջ ծնած, սնած և զործած են»:

Մեր այս հայ տաղանդները պանծա-
ցնելու մասին՝ ցաւալի է ըսել՝ որ Հայ
մասնուր ժլատ գտնուեցաւ, կամ անկարող
եղաւ դրուատել զանոնք ըստ արժանայն։
Այնպէս այս երկրորդ նուագահանդէսի II.
III. IV. մասերն, ձեւացած B. Godardի
Griegի, Wieniawski, Kreislerի, Pop-
per-Auerի հատընտիր կտորներէ, զորս
Յարութիւն Սինան դաշնակով և Գէորգը
Յութակով, միշտ հատուած նուագելէ վերջ,
երաժշտապետը տեսնելով հանդիսականնե-
րու սակաւութիւնը և ոմանք անտարբե-
րութիւնը՝ տխուր շնչով մը կը կրկնէր
թէ՝ «Մեր ազգայինները չեն արժեր մեզ
նման երաժիշտ ընտանիք մ'ունենայ. տեղե-
ք շատ հեռու են ցեղարուեստական նուագա-
ծութեամբ նկատառութեան։ Պէտք է որ
մենք մեր Գէորգը յիշենք արտասահման,
ուր կարող պիտի ըլլայ գործել և վար-
ձատրուիլ, նիւթապէս և բարոյապէս»։

Մենք հաւատաստեցինք թէ Գէորգը՝ Սի-
նանեան գեղարուեստական ընտանեաց կան-
խահաս այս ընծիւրը՝ այժմէն իսկ Հայ
երաժշտական բուրաստանին գեղեցկագոյն
ծաղիկն է։ Նա հազիւ թէ փոխադրուի
արտասահմանի յարմարագոյն մէկ միջա-
վայրը՝ մեր ցեղին հանճարը բնորոշող եղա-
կան պերճ դէմք մը պիտի հռչակուի, հռչա-
կանուն շութականարներու հոլիւն մէջ պի-

տի փայլի, ինչպէս լուսինը աստղերու մէջ.
և մեր այս հաւատաստութիւն վերջակէտէն
առաջ՝ արդարութեամբ ըսենք թէ Գէորգի
Էօթէնի մօրն արժանիքը շատ մեծ եղած է։
Տիկին Էօթէնի՝ դուստր է այն նշանաւոր
քանոն հնչեցնող Գէորգ Մարտիրոսեանի՝
որ իր աղջիկը դաշնակի համար աշակեր-
տուհի ըրած էր Գրիգոր աղա Սինանեան.
ապա՝ ասոր որդին Մատթոյր Յարութիւնը
դաշնակի ուսուցիչը եղած էր. Էօթէնին
ամուսնանալով Յարութիւնի Անտոն եղ-
բորը հետ, իբրեւ օրինակելի հայ տան տի-
կին մը, ո՛չ միայն համեստութեան և բա-
րեպաշտութեան ճանապարհէն առաջնոր-
դած է իր երկու սիրասունը զաւակները,
այլ նաև համբերատար դաստիարակուհւոյ
մը տոկունութեամբ՝ վեցամեայ Գէորգին
նախնական վարժուհին եղած է՝ հազուա-
գիտ ձիրքով մը անոր շութակի փորձե-
րուն՝ դաշնամուրի նուագածութեամբ ըն-
կերանալով։ Նոյնպէս Գէորգին հայրը՝
զանազան տարիներ զաւկին շութականա-
րութեան՝ առաջնորդելէ յետոյ՝ զայն բոլո-
րովին յանձնած էր Մատթոյր Յարութիւնի
խղճամիտ առաջնորդութեանը, որով Գէորգ
պատանին ձեւացած է կանխահաս վիր-
դառ մը։

Հ. ՆԵՐՍԷՍ

ԱՌԱՋԻՆ ՊՈԼԵՏԵԻԿ ՍԱՒԱՌՈՒՍԱԿԸ

Ի Բ Բ Ն Ս Ո Յ Շ

Պոլեւիկ հարտարարուեստը վերջացուց
առաջին կարծիք սաւառնակին շինութիւնը։
Պէտք էր ան շատ կանուխէն լմացած ըլլար,
վասն զի արդէն յատակագիծը պատրաս-
տուած էր 1919-ին, քայք կազմութիւնը
տեսնեց մինչեւ զարուն։ Այս ուղև սաւա-
ռակին երեւոյթը քիչ մը տարօրինակ է.
կարծես երկու սաւառնակներ են որ իրարու
միացած են. ունի երկու տարբեր կազ-
մուածք՝ երկու ձուլուածքով եւ երկու շար-
ժիչ մեքենայով։ Կրնայ տանիք եօթը ուղե-
ւորներ ու մնալ 5 ժամ՝ օդոյ մէջ, ժամը
180 քիլոմ. արագութեամբ։ Կարճ ատենի
մէջ կրնայ նաեւ զինուորական սաւառնակի
փոխարկուիլ։

«ԲԱԶՄԱՎԷՊ»-ի յունուարի այս թիւը կը
ղրկենք առ հասարակ այն ամէն անձանց՝
որոնք արդէն բաժանորդ էին 1922ի մեր
ամսաներթին։ Որոնք որ ցարդ չեն նորո-
գած իրենց բաժանորդագրութիւնը ներ-
կայ տարւոյս համար՝ հաճին ամսփապէս
իմացնել մեզ եւ կրկնել իրենց հասցէն,
ղրկելով միանգամայն բաժնեգիրը Ֆրանք
գաղը. 30. — տող. 6 ԿԱՆԻԻԿ։

Իսկ այն ամէն բաժանորդները, որոնք
դեռ չեն վճարած 1922ի իրենց բաժնեգիր-
նորը՝ իր ներուրկն փութով փակել իրենց
բաժագրութեանն հետ։

